

մեզմ հոտանքով մը կը զլմէ Միջերկրա-
կան ծով, որ շատ մօտն է:

Ատանայի զեալը Պին Պոլա լեռնէն, Պո-
լանդիէն սկսեալ, մօտաւորապէս հինգ
հարիւր քիլոմետր երկարութիւն ունի:

* * *

Կիլիկիոյ երրորդ զեալն է Տարսոնի զե-
ալը, որ հին անունով կը կոչուի Կիւքնոս:
Կիւքնոս, իրականութեան մէջ Կիլիկիոյ
իշխանապետութեան եւ թագաւորութեան
ժամանակ՝ հայկական դոյն մը ստացած
էր: Այս զեալին սկզբնաւորութենէն մին-
չեւ ծով հասնիլը հայկական բերդեր, ա-
մրոցներ, մանաւանդ վանքեր կը շրջա-
պատեն իր ընթացքը:

Այդ բերդերն ու վանքերը մեր կիլի-
կեան պատմութեան մէջ մեծ դեր կատա-
րած են: Հեթումեաններու Լամբրոնը,
Պապրոնը, Օշինի «հազարն» ամրոցը,
նոյնպէս Սկեւոյ, Օհաննու աղաւթը —
կուսանոց —, Սալբուի Ս. Աստուածածին,
Գեմեդեալի վանքերը յայտնի մշակութ-
ային կեդրոններ եղած են, Կիլիկիոյ
շրջանին մէջ:

Կիւքնոսի ակերը բազմազան չեն. թէեւ
մէկ-երկու առուակներ կը միանան իրեն,
բայց անոնք ձմրան հեղեղատին միայն
կրնան ստուարացնել ծաւալը Կիւքնոսին:

Կիւքնոս զեալը ծնունդ կ'առնէ Պուլլար
ու Պոլանդի լեռներուն միացման կէտէն,
կամ այս լեռներուն կազմած ձորամէջէն:
Չորը կամ կիրճը՝ Լամբրոնի սարահար-
թէն հազար մետր խորունկութիւն ունի,
եւ այս ձորին մէջէն՝ որ այժմ կը կոչուի
ձէհէնէմէրէ (դժոխածոր), մեր պատ-
մութեան մէջ Ժեռակրայ գետ անունով
ծնունդ կ'առնէ. եւ երբ դաշտային Կիլի-
կիա կը հասնի, անունը փոխելով՝ Կիւք-
նոս կը կոչուի:

Այս անդնդախոր ձորին մէջ Ժեռակրայ
զեալին ձախ ափին կը գտնուի Սալբուի
Ս. Աստուածածին վանքը, ուր Ներսէս
Լամբրոնացին՝ Օշին Բ. ի որդին, իր ու-

սումը կը ստանար Յովհաննէս եւ Ստե-
փանոս վարդապետներուն մօտ: Ներսէս
Լամբրոնացին մայրը՝ Շահանդուխտ
Պահլաւունի, ստէպ կ'այցելէր իր որդե-
ւոյն, Օհաննու Աղաւթի կուսանոցէն, որ
մօտիկ ըլլալով՝ շատ անգամ հետիոտն
կ'երթար իր տղուն մօտ, ձորին մէջ դըռ-
նուղ փոքր վանքը, ուր քանի մը ընկու-
ղենի եւ կեռասներ ծառերէն զատ՝ ոչ-
ինչ կար:

Ժեռակրայ զեալը, յամբ ընթացքով,
կիրճերու մէջէն հոսելով կը հասնի Քէշ-
պիւքէն ըստած վայրը. հոս Լամբրոնի
զեալակը կը միանայ իրեն եւ Ժեռակրայ
անունը կը փոխուի Կիւքնոսի:

Լամբրոնի զեալակը, իր ոլորտապտոյտ
ընթացքին՝ արեւելքէն ու արեւմուտք —
հարաւէն կը շրջապատէ «անառիկ, ան-
մատոյց» Լամբրոնի բերդը, եւ քիչ հեռու
Սկեւոյ նշանաւոր վանքին մօտէն անց-
նելով՝ կը թեքի դէպի արեւմուտք, կը
մտնէ նեղ կիրճի մը մէջ, կը թաւալի Ժայ-
ռերու եւ խութերու վրայէն: «Մանազ»
հին ընդանդական աւերակ քաղաքին
«Քէշպիւքէն» կամուրջէն քիչ անդին կը
միանայ Կիւքնոսին:

Կիւքնոս հոս եւս ձորերու մէջէն կ'անց-
նի մինչեւ որ գտնէ Տաւրոսեան լեռները:

Այս դաշտային Կիլիկիոյ մէջն է Կիւք-
նոսը, եւ կարճ ճամբայ մը ունի ծով հաս-
նելու: Հին դարերուն եւ նոյնիսկ մեր Կի-
լիկեան թագաւորութեան ատեն, Կիւք-
նոս՝ Տարսոն քաղաքին ճիշտ մէջէն կը
հոսէր. բայց ներկայիս, քաղաքին արեւ-
ելքէն եւ պարիսպներուն վրայէն անցնե-
լով՝ ջրվէժ մը գոյացուցած՝ աղմուկով
կը թափի Ժայռերուն վրայ, ուրկէ հինգ-
վեց քիլոմետր եւս հեղատափ ու հանդար-
տիկ յառաջանալով կը հասնի Միջերկրա-
կան ծով:

Սիլիֆքէի մօտ՝ Կալիկադոնոս զեալը Կի-
լիկիոյ սահմաններէն դուրս կը գտնուի:

Տնք. Յ. Տէր ՂԱԶԱՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԵՐԴԵՐԸ

ԿԱՅԵՆՈՅ ԿԱՍ ԿԱՅԵԱՆ ԲԵՐԴ

Ա.— Տեղագրական. Կայենոյ կամ Կայ-
եան բերդը, մեր Բաղրատունեաց իշխա-
նութեան հին եւ նշանաւոր բերդերէն մէկն
էր. եւ կը գտնուէր Գուգարաց աշխար-
հին Կայենոյ ձոր կամ Չորափոր գաւա-
ռին մէջ, Սանահնի եւ Հաղրատի վանքե-
րուն միջեւ. թերակղզիի ձեւ ունեցող քա-
րածայրի մը բլուրին վրայ կը բարձրա-
նար ամրութեամբ հռչակաւոր, այժմ ա-
ւերակ Կայենոյ բերդը¹. այս մասին կը
գրէ Յովհան Կաթողիկոս, «գտն հասա-
նեն ի Չորափորն եւ տեսանեն զԿայեան
բերդ...»²:

Արեւելեան, արեւմտեան եւ հիւսիսա-
յին կողմերէն Կայեան բերդը շրջապատ-
ուած էր անդնդախոր ձորերով. արեւել-
քէն Նիրեկի ահաւոր ձորը կար, որուն
մէջէն սուրալով կ'անցնէր Ժիւլանքոյ զե-
ալակը. իսկ հիւսիսէն եւ արեւելեան կող-
մերէն շրջապատուած էր ընդարձակ Չո-
րաղետով, եւ միայն հարաւային կողմէն
էր որ կը միանար Որնակայ դաշտին հետ:
Այսպէս, չորս կողմերէն բնական միջոց-
ներով պաշտպանուած ըլլալով, իր Ժա-
մանակի անառիկ ամրոցներէն մէկը դար-
ձած էր: Բացի իր բնական ամրութիւննե-
րէն, Կայեան բերդը ամրացուած էր նաեւ
հզօր պարիսպներով, աշտարակներով, եւ
խրամներով:

Կայեան բերդը երկու մասերէ կազմ-
ուած էր, վերին եւ ստորին, որոնք իրա-
րու հետ միացած էին կամ հաղորդակցու-
թեան մէջ էին, սանդղաձեւ մուտքերով
եւ ամուր գոնիւրով: Բերդին երկարու-
թիւնն էր, հարաւէն դէպի հիւսիս 175
մետր. լայնքը 30 մետր, ծովուն երեսէն
800 մետր բարձրութեան մը վրայ:

Բերդին արեւելեան մէկ ծայրամասին
վրայ, քարածայրի մը գագաթին, կը
բարձրանար Ս. Աստուածածնի անունով
զեղեցիակերտ փոքրիկ եկեղեցի մը, շին-
ուած սրբատաշ քարերով, Հաղրատի ա-
ռաջնորդ Յովհաննէս Կաթողիկոսէն: Ե-
կեղեցիին արեւելեան ճակատին վրայ կայ
արձանագրութիւն մը, հայոց Ո թուակա-
նով, որ է Քրիստոսի 1151 թուականը.
«Կամաւն Աստուծոյ, ես տէր Յովհաննէս,
առաջնորդ Հաղրատայ, քուերորդի մեծի
պարոնաց Զաքարէի եւ Իւանէի, ի Ժամա-
նակին որ եհաս սասանութն աշխարհիս
մերոյ յանուրէն խորագեացն, ոչ զոյր
տեղի ապաստանիս Ս. Նշանիս եւ եղ-
բարցս, հրամանաւ քեռոյն իմոյ Իւանէի,
եւ որդւոյ իւրոյ Աւագին եւ Շահնշահին,
որդւոյ Զաքարէի, շինեցի զամրոցս եւ զե-
կեղեցիս Հաղրատայ Ս. Նշանիս բազում
աշխատութեամբ»³: Ինչպէս կը տեսնուի
այս արձանագրութենէն՝ ամրոցիս եւ ե-
կեղեցիիս շինութիւնը իրեն կը վերադրէ
Յովհան Կաթողիկոս. սակայն, ինչպէս
պիտի նկատենք վերջը, ամրոցի շինու-
թիւն ըսելով՝ վերանորոգութիւն պէտք
ենք հասկնալ:

Բերդին մէջ միայն եկեղեցին տակա-
ւին կանգուն կը մնայ. պարիսպները կի-
սովին քանդուեր են, եւ կը մնան պա-

1 Հիւպըման Հ. Հին Հայոց տեղւոյ անունները,
տպ. Վիեննա, 1907, էջ 360:

2 Յովհաննէս Կրդ. Պատմութիւն, տպ. Երուսա-
ղէմ, 1867, էջ 387:

3 Ջալալեանց Սարգիս վրդ. Ճանապարհորդու-
թիւն ի Մեծն Հայաստան, տպ. Տիգրիս, 1841,
էջ 81-82:

ընտանեկան ստորին մասերը, այնպես որ որոշ կարելի է ճշտել բերդին սկզբնաւորութիւնը:

Բ. — Պատմական. Զանազան ենթադրութիւններ կան բերդի շինութեան մասին: Վարդան պատմիչ բերդի շինութիւնը կու տայ Հասան, Վրաստանի թագաւորի իշխաններէն մէկուն, որ ԺԲ. դարուն ապրած է. «Ի Հասանէ Կայենեցոյ շինողէ բերդիս»⁴: Սակայն ո՞վ էր Հասան Կայենեցին, որուն կը վերագրէ Վարդան բերդի շինութիւնը, պիտի տեսնենք աւելի վերջը, երկրորդ մասին մէջ:

Կայեան բերդը Բազմալեզու օրենքուն կը յիշատակուի, իբր անոնց նշանաւոր եւ հզօր բերդերէն մէկը, եւ շինուած ըլլալու է Ժ-ԺԱ. դարուն մէջերը:

Ժ. դարուն բերդի իշխան կը յիշատակուի Աշոտ Երկաթի աները՝ Սահակ իշխանը, որ իշխած է 922 թ. ժամանակները. իսկ Աշոտ Ուրբաժան որդի Սմբատ թագաւորին ժամանակ՝ անոր տիրապետութեան իրաւունքը անցեր է իր Գուրգէն եղբորը, որուն համար Զամեան կը գրէ. «Իսկ կրտսեր եղբայր նորա Գուրգէն հաւատարիմ եղեալ՝ ժառանգեաց հրամանաւ նորա զՏաշիր եւ զՏաւուշ, Սեւորդովքն Չորապետոյն եւ զամենայն զԿայեան եւ զԿայծոն, եւ զայլ բերդս անուանիս ըստ Վարդանայ»⁵:

Ժամանակ մը Կայեան բերդին տիրած են նաեւ Պահլավունի իշխանները, Կայծոն եւ Բջնի բերդերուն հետ: Կիրակոս պատմիչին համաձայն՝ բերդի մէջ կ'աւանդուի Աթաբէկ Իւանէի որդին՝ Աւագ իշխանը, թաթարներու Զարմաղան խանի արշաւանքներուն ժամանակ, 1220ին, եւ իր հետ կ'ապաստանին նաեւ ամբողջ զաւառին բնակիչները:

Աւագ ուղևորվ թաթարներու Ետուղա զօրավարին սիրտը սիրաշահիլ, իր աղջիկը անոր կնութեան կու տայ. բայց անով իր ծրագիրը չի կրնար յաջողցնել. Ետուղա բերդին պաշարումը աւելի կը սաստկացնէ. Աւագ քաջութեամբ կը դիմադրէ, եւ Ետուղա յուսահատ յարձա-

կումներ կ'ընէ բերդին վրայ. բազմաթիւ զինուորներ կ'իյնան անոր պարիսպներուն առջեւ, եւ Բազմալեզու փառքը հանդիսացող Կայեան բերդը անասան կը մնայ. Ետուղա տեսնելով որ պիտի չկարենայ յարձակումով առնել, խիստ պաշարումի մը կ'ենթարկէ բերդը չորս կողմէն, ջանալով դանել անոր ջուրի ճամբան, որ ծածուկ ուղիով մը բերդ կը հասնէր. թաթարները վերջապէս կը յաջողին դանել ջուրի խողովակները, կը կտրեն եւ բերդի բնակիչները կը ստիպուին Ետուղայի զթութեան զիմել. Աւագ նեղ կացութեան մատնուելով՝ կը ստիպուի իր Գրիգոր Տղայ կոչուած իշխանը բազմաթիւ նուէրներով անոր զրկել, հաշտութիւն առաջարկելով: Այս անակնկալ յաջողութիւնը շատ ուրախացուց թաթարներու Նուին մեծ առաջնորդը, եւ հրաման տուաւ իր զօրքերուն որ ազատ թողուն Աւագ իշխանը դալու իր առջեւ. Աւագ դնաց Զարմաղան Նուին առջեւ, ներկայացու անոր, եւ մեծ պատուով ընդունուեցաւ. խաղաղութեան դաշինք դրին. Աւագ պիտի օգնէր իրեն, իսկ Զարմաղան Աւագի պիտի տար ընդարձակ երկիրներ:

Բերդի շուրջ կատարուած պեղումներէն կը տեսնուի որ ծածուկ ճամբով Կայեան բերդ եկող ջուրը կու գար Որնակ գիւղի հեռաւոր մէկ ակերէն. անոր թրծուած խողովակները տակաւին կը տեսնուին մինչեւ այսօր, եւ այս մասին տաւոյնութիւն մը եւս մնացեր է, չըջալայ բնակիչներուն քով, ըստ որոնց՝ Արխանդերու թագաւորը Գուրգէն մտնելով, շատ աւերներ կ'ընէ, եւ կու գայ կը պաշարէ նաեւ Կայեան բերդը, որուն մէջ ապաստանող հայ ժողովուրդը երկար կը դիմադրէ, եւ չեն յանձներ իրենց բերդը. Արխանդերու իշխանը սաստիկ կատաղած, տեղեկանալով որ բերդին ջուրը Որնակ

4 Վարդան Պատմիչ, Հաւաքումն պատմութեան, Երկ. Վենետիկ, 1865, էջ 140:

5 Անդ, էջ 92:

գիւղէն կու գար, ստորերկրեայ ճամբաներով, գիւղին ամբողջ բնակիչներուն կը սպառնայ սուրէ անցընել, եթէ չյայտնեն անոր գաղտնիքը. կը բռնեն պառաւ կին մը, կը չարչարեն, եւ պառաւ կինը կը ստիպուի բերդ տանող ջուրի ակը ցոյց տալ. անմիջապէս ջուրը կը կտրեն. եւ բերդի բնակիչները կը ստիպուին անձնատուր ըլլալ:

Ժողովրդական աւանդութեամբ Որնակ գիւղի անունը կը բացատրուի, իբրեւ թէ, որն է բերդի աղբիւրի ակը, ուսկից առաջ եկած է Որնակ, որն է ակը:

Ժամանակ մը վերջ, երբ Լոռիի հայ թագաւորութիւնը կը կործանուի, եւ երկիրը շարունակ արշաւանքներու կ'ենթարկուի, Կայեան բերդը կը մնայ չըջալայ վանքերուն եւ գիւղերուն միակ ապաստանարանը. Հաղբատի Ս. Նշանը կը բերեն եւ Կայեան բերդին մէջ կը պահեն, իսկ չըջալայ ժողովուրդը հոն կ'ապաստանի Հաղբատի եւ Սանահնի վանքերու վանականներուն հետ: Բերդս իր անմատչելիութեան համար կոչուած է նաեւ Տաւանց բերդ, այսինքն տես եւ անց. կարելի է անոր մօտենալ⁶:

Թաթարներու իշխանութեան օրով, ինչպէս տեսանք, Աւագ իշխանն է որ կը տիրէ բերդիս եւ իր չըջալայ գիւղերուն. Աւագ մեծ վստահութիւն կը վայելէ թաթարներու խանին մօտ, եւ խանը զինքը մեծ պատիւներով կը վարձատրէ. այնպէս որ 1242-1243 տարիներուն, Աւագ իր բանակը միացուցած թաթարներու իշխանի բանակին հետ, կ'արշաւէ Փոքր Ասիա եւ մեծամեծ յաղթութիւններ կ'ընեն, միացեալ բանակով⁷:

Աւագ Կայեան բերդէն մեծապէս օգտակար կ'ըլլայ իր չըջալայ ժողովուրդներուն, եւ մասնաւորապէս վրացիներուն, եւ զանոնք իր աղքեցութեան տակ կ'առնէ:

Աւագ կը մեռնի 1252 թ. ժամանակները, եւ մահը գաւազ չունենալուն՝ իրեն կը յաջորդէ Կայեան բերդին մէջ իր եղբոր որդին Շահնշահ. սակայն ասիկա չի կրնար հայ իշխաններուն սիրտը սիրաշահիլ, ատելի կը դառնայ, եւ հայ իշխան-

ները զինքը կը հալածեն: Շահնշահ իր անձն ազատելու համար՝ կը թողու իր բերդն ու կալուածները իր կնոջ՝ եւ իր քրոջ Գոնցային, որ Վրաստանի Դաւիթ թագաւորին հետ ամուսնացեր էր, եւ կը փախչի օտար երկիր:

Գոնցայի մահէն վերջ՝ Կայեան բերդին կ'իշխէ իր աղջիկը Խոջաք, որ տէր կը դառնայ նաեւ Բջնի եւ Գառնի բերդերուն:

Զարեանները կ'իշխեն այս կողմերուն եւ Կայեան բերդին մինչեւ ԺԴ. դար, եւ ապա կը ձուլուին վրացի ազնուական տուններու հետ⁸:

ՃՇՏՈՒՄՆԵՐ ԿԱՅԵԱՆ ԲԵՐԴԻՆ ՀԻՄՆԱԴՐԻՆ, ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵՒ ՏԵՂԻՈՅՆ ՄԱՍԻՆ

Ո՞վ շինած է, ե՞րբ շինուած է, եւ ո՞ւր շինուած էր Կայեան բերդը. ահա երեք հարցումներ, որոնց մեր պատմագիրները որոշ կերպով չեն պատասխաներ. մանաւանդ թէ իրարու հակասական հաւաստումներ կ'ընեն, եւ չփոթ կացութեան կը մատնեն Կայեան նշանաւոր բերդին անցեալ փառաւոր պատմութիւնը:

Մենք պատմութեան հետքերուն վրայէն քալելով, պիտի ջանանք դոհացուցիչ պատասխան մը տալ:

1. Ո՞վ շինած է Կայեան բերդը — Այս մասին մեր պատմագիրները, անորոշ եւ տարտամ տեղեկութիւններ կու տան:

Կայեան բերդը կը յիշեն մեր պատմիչներէն՝ Կիրակոս, Վարդան, Մխիթար Այրիվանցի, Շապուհ Բազմալեզու եւ Յովհաննէս կաթողիկոս. ամէնքն ալ անուղղակի եւ անցողակի կերպով կը յիշեն ու կ'անցնին, առանց անոր պատմութեան մանրամասնութեան մէջ իջնելու:

6 Եփրիկեան Հ. Ս. Բնաշխարհիկ բառարան, Երկ. Վենետիկ, 1902, էջ 273:

7 Կիրակոս Վրդ. Գնձ. Համառոտ պատմութիւն, Երկ. Վենետիկ, 1865, էջ 290:

8 Այվայանեան Ա. Պատմական Հայաստանի սահմանները, Երկ. Գահիրէ, 1950, էջ 340-344:

Գլխաւորը հեղինակը որ կը յիշէ Կայ-
եան բերդը Վարդան պատմիչն է, որ խո-
սելով ԺԲ. դարուն ապրող Բիւրա իշխա-
նին մասին, որ տիրած էր Չորափորը պա-
ւառին եւ Կայեան բերդին, կը գրէ. «Գլի
յայնմ ժամանակի նա ունէր զԿայեան
հայրենեօք, ի Հասանայ Կայենեցոյ շի-
նողէ բերդիս»⁹: Հոս, ինչպէս կը տեսնուի
բնագրէն, Վարդան Կայեան բերդին շի-
նող կը համարի Հասան Կայենեցի իշխա-
նը, առանց մանրամասնութիւններ տա-
լու շինողին անձին եւ ժամանակին շուրջ:

Սակայն հոս չի վերջանար Կայեան բեր-
դի շինողին առեղծուածը: Միւթար Այ-
րիվանեցի եւս կը խօսի այս բերդին մա-
սին, եւ անոր շինող կը համարի Գրիգոր
Մաղիստրոսի հայրը, Հոլում Վասակ, որ
ապրած է Բագրատունեաց իշխանութեան
օրով, եւ անոնց սպարապետը եւ թագին
պաշտպանը եղած է: 1045ին, երբ Բա-
գրատունի Գագիկ թագաւորը Պոլիս կը
կանչուի, Յունաց Մոնոմախոս կայսեր
ներկայանալու, կայսրը զինքը կը բռնէ եւ
Պիղու քաղաքը կ'աքսորէ, եւ Անիի աթո-
ռը թափուր կը մնայ. այն ատեն Մոնո-
մախոս կայսրը կը կանչէ յունասէր կու-
սակցութեան գլուխ Գրիգոր Մաղիստրո-
սը, եւ անոր կը յանձնէ Բագրատունեաց
թագին կապուած հոգերը, եւ այս առթիւ
Այրիվանեցիին կը գրէ. «որ շինեաց զե-
կեղեցին Կեչառու, սա էր որդի Հոլում
Վասակայ, շինողին Բջնոյ, Կայենոյ, եւ
Կայծենոյ»¹⁰:

Ահաւասիկ երկրորդ անձ մը, որուն կը
վերագրուի Կայեան բերդի շինութիւնը.
Այրիվանեցի եւս որոշ մանրամասնու-
թիւններ չի տար ո'չ բերդին, ո'չ շինողին
եւ ո'չ շինութեան ժամանակին մասին:

Կը յիշուի երրորդ անձ մը եւս, որուն
կը վերագրուի Կայեան բերդի շինութիւ-
նը, եւ ասիկա է Հաղբատի առաջնորդ
Յովհաննէս եպիսկոպոսը. ասիկա սելճուք
թուրքերու արշաւանքներէն խոյս տալով,
կ'ապաստանի Կայեան բերդին մէջ, եւ
հոն բերդին մէկ բարձր դիրքին վրայ շի-
նել կու տայ մատուռ մը, եւ հոն կ'ամ-
փոփէ Հաղբատի սուրբ խաչի մասունքը-

նէրը. բարեբախտաբար, Յովհաննէս ե-
պիսկոպոս, նոյն մատուռին մէկ ճակա-
տին վրայ, արձանագրութիւն մը փորա-
գրել կու տայ, ուր ինքզինքը շինող Կայ-
եան բերդին կը յայտարարէ. արձանա-
գրութիւնը, ինչպէս ըսինք, կը կրէ հա-
յոց Ո թուականը, որ է Քրիստոսի 1151
թուականը. կ'ըսէ, «Կամաւն Աստուծոյ,
ես տէր Յովհաննէս, առաջնորդ Հաղբա-
տայ, քուերորդի մեծի պարոնաց Զաքա-
րէի եւ Իւանէի... հրամանաւ քեռոյն իմոյ
Իւանէի եւ որդւոյ իւրոյ Աւագին եւ Ծա-
հրնշահին, բազում աշխատութեամբ շի-
նեցի զամբոցս եւ զեկեղեցիս»¹¹:

Հոս Յովհաննէս եպիսկոպոս, բաւական
մանրամասն տեղեկութիւններ կու տայ իր
ժամանակի իշխաններու մասին, եւ իր
անձի մասին. սակայն թէ ի՞նչ եղած է իր
զերը Կայեան բերդի շինութեան շուրջ,
մեղ կ'ասկածի մէջ կը թողուի իր խօսքե-
րը, որովհետեւ, ինչպէս տեսնուի, ինքը
երրորդ անձն է որ Կայեան բերդին շինող
կը ներկայանայ մեր պատմութեան մէջ:

Ահա երեք անձեր, որոնց կու տան մեր
պատմիչները Կայեան բերդին շինութեան
պատիւը. ո՞վ էին այս անձերը, եւ
ի՞նչ ժամանակի մէջ ապրած եւ գործած,
եւ հետեւաբար շինած նաեւ մեր Կայեան
բերդը:

ա. — Առաջին շինող Կայեան բերդին կը
յիշատակուի, Վարդան պատմիչէն, Հա-
սան Կայենեցիին: Ո՞վ էր Հասան Կայենե-
ցին. մեր պատմութեան մէջ անձանթ
անձ մըն է. ան հաղիւ երբեք կը յիշուի
անդամ մը մեր Վարդան պատմիչէն: Այս
անձին մասին Աճառեան իր Անձնանուն-
ներու բառարանին մէջ կը գրէ. «Հասան
Կայենեցի վրաց Գէորդ թագաւորին իշ-
խաններէն էր, շինեց Կայեան բերդը»¹²:

9 Վարդան, անդ, էջ 140:

10 Միւթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց,
տպ. Մոսկուա, 1867, էջ 58-59:

11 Զալպիանց, անդ, էջ 812: Էփրիկեան, անդ,
էջ 272:

12 Աճառեան Հր. Հայոց անձնանունների բառա-
րան, հտ. Գ. տպ. Երևան, 1946, էջ 57:

Հոս Աճառեան կու տայ Վարդանի մեղի
հաղորդածը, Կայեան բերդի իրբեւ շի-
նող, եւ նորութիւն մը հունի. կը յիշէ
վրաց Գէորդ թագաւորը, բայց թէ ո'ր
Գէորդն էր, առաջինը՝ թէ երկրորդը,
նոյնպէս անորոշ կը թողու. որոնց ժա-
մանակ ապրած է Հասան Կայենեցին. ե-
թէ Վրաց Գէորդ Ա.ի օրով, ապրած է
1072-1089ի ժամանակները. իսկ եթէ
Վրաց Գէորդ Բ. թագաւորի ատեն, ա-
պրած ըլլալու է 1160ի ժամանակները:

բ. — Կայեան բերդի իրբ երկրորդ շինող
կը յիշատակուի Միւթար Այրիվանեցիէ
Հոլում Վասակը: Ո՞վ էր Հոլում Վասակ.
մեր պատմութեան մէջ բաւական ծանօթ
անձ մըն է, եւ ստէպ յիշուած: Հոլում
Վասակ Գրիգոր Մաղիստրոսի հայրն էր.
ապրած 950-1021ի ժամանակները:

Միւթար Այրիվանեցի Հոլում Վասակի
մասին որոշ ծանօթութիւններ ալ կու տայ
մեղի, թէ անիկա ապրած է Տուրքիլ պե-
տի արշաւանքներուն ժամանակ, եւ կըռ-
ուած անոր գէմ՝ Անիի պաշտպանութեան
համար, եւ մեռած 1021ին Սերկեւիլ լե-
ռան վրայ. ըստ պատմագրին, Հոլում
Վասակ, անհաւասար կռիւէ մը վերջ,
յաղթական, երբ Անի կը վերագառնար,
յոգնած, կը բարձրանայ Սերկեւիլ լեռան
մէկ բարձունքին վրայ եւ կը հանգչի, հոն
սոք քուն կը մտնէ. թշնամիները պա-
տահմամբ անկէ անցնելով եւ տեսնելով
զինքը՝ կը սպաննեն: Այսչափ Հոլում Վա-
սակի մասին:

գ. — Կայեան բերդի շինող կը յիշատակ-
ուի արձանագրութեան մը մէջ, նաեւ եր-
րորդ անձ մը, Հաղբատի առաջնորդ Յով-
հաննէս եպիսկոպոսը. ինչպէս տեսնուի,
Կայեան բերդի շինութեան ժամանակ,
Յովհաննէս եպիսկոպոս բերդին մէկ բար-
ձունքին վրայ շինել կու տայ մատուռ մը
եւ բարե-
բախտաբար անոր մէկ ճակատին վրայ
զինքը Կայեան բերդին շինող կը յայտա-
րարէ. «Կամաւն Աստուծոյ, ես տէր Յով-

հաննէս, առաջնորդ Հաղբատայ, քուեր-
որդի մեծի պարոնաց Զաքարէի եւ Իւանէի,
ի ժամանակին որ եհաս սասանումն աշ-
խարհիս մերոյ յանաւրէն խորագմեացն,
ոչ զոյր տեղի ապաստանիս Ս. Նշանիս
եւ եղբարցս, հրամանաւ քեռոյն իմոյ Ի-
ւանէի, եւ որդւոյ իւրոյ Աւագին եւ Ծա-
հրնշահին, որդւոյ Զաքէի, շինեցի զա-
մրոցս, եւ զեկեղեցիս Հաղբատայ սուրբ
Նշանիս բազում աշխատութեամբ»¹³: Յով-
հաննէս եպիսկոպոս ապրած է 1175-1233ի
ժամանակները, եւ հետեւաբար նոյն ժա-
մանակները շինած կամ նորոգած ըլլալու
է բերդս:

Արդ, պատմութիւնը մեղի երեք անձեր
կը մատնանչէ իրբեւ շինող Կայեան բեր-
դին.

ժամանակի առաջնութեան կարգով՝
անոնք են. Առաջին՝ Հոլում Վասակ 950-
1021. Երկրորդ՝ Հասան Կայենեցի 1155-
1185. Երրորդ՝ Յովհան եպիսկոպոս 1175-
1233:

Ո՞վ է այս անձերէն բերդին իրական
շինողը. եթէ ուզենք արդարօրէն հետեւիլ
պատմութեան մեղի տուած թուականնե-
րուն, շատ բնականօրէն Կայեան բերդին
շինութեան պատիւը մենք պիտի տայինք
Հոլում Վասակի, Գրիգոր Մաղիստրոսի
հօրը, որ երկու իր մրցակիցներէն շատ
առաջ ապրած է, եւ ինչպէս ըսինք՝ Բա-
գրատունեաց թագին պաշտպանը եղած է:
Հոլում Վասակի իշխանապետութեան շուր-
ջանին՝ Բագրատունեաց զահին վրայ կը
բաղմէր Սմբատ Տիեզերակալի եղբայրը՝
Գագիկ Ա. Ծահնշահ, որ կը վախճանի
1020ին. ասոր մահով՝ թագին շուրջ
վէճեր կը ստեղծուին, Յովհաննէս Սմբատ
իրբեւ անդրանիկ զաւակ՝ կը ստանայ Ա-
նին իր շրջակայ գաւառներով, եւ հետը
Չորափորը, ուր էր նաեւ Կայեան բերդը:

Այս մասին խօսելով Վարդան պատմիչ,
կ'ըսէ. «Գթագն տայ Յովհաննէսի, եւ զԱ-
նին եւ զԵրիւսի... եւ զգալուն Այրարա-
տեան, զԿայեան, եւ զԿայծոն եւ զՏա-

13 Զալպիանց, անդ, էջ 81:

լեան, որ Հաղբատի վանքին առաջնորդ եղած էր, եւ թիզ առ թիզ քննած Ձորագետի ամբողջ ընթացքը՝ որ Հաղբատի առջեւէն կ'անցնէր, կը գրէ. «Գուգարաց գաւառին համանուն Կայենոյ ձորին մէջ Սանահնի եւ Հաղբատի միջեւ, թերակղզիի ձեւ ունեցող քարաժայռի մը բլուրին վրայ կը բարձրանայ ամբողջեամբ նշանաւոր, այժմ աւերակ, Կայենոյ բերդը...»²⁸. Եւ որովհետեւ, ինչպէս ըսինք, Սանահնի եւ Հաղբատի վանքերը կը գտնուէին եւ կը գտնուէին այսօր ալ Ձորագետի կամ Դերէտի արեւելեան ափին վրայ, ուրեմն՝ Կայենան բերդը եւս կը գտնուէր Աղստեւի կամ Ձորագետի ափին:

Այս մեր հաւաստումը կը հաստատուի աւելի որոշ կերպով, Հաղբատի առաջնորդ Յովհաննէս եպիսկոպոսի Կայենան բերդին մէջ թողած արձանագրութենէն. ինչպէս տեսանք, Յովհաննէս եպիսկոպոս Կայենան բերդին մէջ կը շինէ մատուռ մը, եւ անոր ճակատին թողած արձանագրութեան մէջ՝ այս մասին նկատելի կէտ է իր սա տողերը, որոնք ցոյց կու տան, թէ Կայենան բերդը կը գտնուէր Ձորագետի ափին՝ Սանահնի եւ Հաղբատի մօտերը. կ'ըսէ. «ոչ գոյր տեղի ապաւինի ոսւրը նշանիս եւ եղբարցս». Յովհաննէս եպիսկոպոս, խորազմեաց յարձակումներուն ժամանակ ապահով տեղ մը կը փնտռէ Հաղբատի եւ Սանահնի միարաններուն, եւ այս պատճառով՝ այս վանքերու մօտիկ եւ զող նշանաւոր Կայենան բերդը կը նորոգէ. «չինեցի զամրոցս եւ զեկեղեցիս Հաղբատայ սուրբ Նշանիս բազում աշխատութեամբ. արդեթէ ոք զսա ի Հաղբատայ հանէ, թէ ի մեծաց, զինչ եւ իցէ պատճառաւ, մարզն այն նզովեալ եղիցի...»²⁹:

Յովհաննէս եպ. կը նորոգէ Կայենան բերդը եւ հոն կը փոխադրէ՝ իրրեւ ապահով տեղ այլազգիներու դէմ, սուրբ Նշանը, եւ բերդը կու տայ իրրեւ կալուած եւ ապաստանարան Հաղբատի կրօնաւորներուն. «տեղի ապաւինի». որեւէ վտանգի պահուն՝ հոն կ'ապաստանէին կրօնաւորները. արդ, եթէ բերդս հեռու ըլլար՝ չէր կրնար Հաղբատի վանքին իրրեւ կալուած

տրուիլ, եւ չէր կրնար նաեւ իրրեւ ապահով ապաստանարան ծառայել վանականներու՝ պատերազմի մը ժամանակ. որովհետեւ, ըստ երկրորդ կարծիքին՝ եթէ Կայենան բերդը այսօրուան Աղստեւ գետին ափին էր, ուրեմն 40-50 քիլոմետր հեռու էր Հաղբատի վանքէն, եւ վանականները չէին կրնար 40-50 քիլոմետր ճամբայ մը կտրել, ապահով տեղ մը հասնելու համար. անոնք այդքան երկար ճամբու մը ընթացքին, չուտով կ'իյնային թշնամիներու ձեռքը: Նոյն ժամանակի միջոցները թույլ չէին տար այդքան երկար ճամբայ կտրել՝ ապահով տեղ մը հասնելու համար:

Այս մասին կը գրէ բնաշխարհիկ բառարանի հեղինակը եւս, հաստատելով մեր ենթադրութիւնը. «Համբարձման եւ Վարդանանց տօնին օրերը, շրջակայ գիւղերէն բազմաթիւ ուխտաւորներ կու գան: Համբարձման՝ Հաղբատէն, իսկ Վարդանանց տօնին՝ աւելի հեռաւոր գիւղերէն...»³⁰: Արդ, ասիկա կը նշանակէ թէ Կայենան բերդը մօտ էր Հաղբատի, ուր ուխտի կու գային հայ հաւատացեալներ: Եթէ հեռու ըլլար՝ ասիկա դժուար էր:

Արդ, ինչպէս բացատրել ոմանց Կայենան բերդը Աղստեւ գետին ափին գտնուելը: Հ. Ալիշան, որ զօրաւոր հոտառութիւն մը ունէր այսպիսի անորոշ հարցեր լուծելու՝ կը գրէ. «Խաղախ գաւառ ի հիւսիս նահանգին կայ, (որ է Գուգարքի) յարեւմտից սահմանակից զօլով Պորչալուայ»: Իսկ Պորչալուի մասին կը գրէ. «բազում գետք են ի վիճակիս մեծի, այլ գլխաւորն Պորչալու կամ Դերէտ, որ է Ձորոյ գետ, ըստ հնոց խաղայ յարեւելս ի Սօմխթայ եկեալ եւ խառնի ընդ Խրամայ, թափի ի Կուր... եւ Կէօք չայայ, եւ Աղստեւոյ գետով բաժանեալ ի Շամշատեայ. ի միջին դարս հայոց չէն էր յոյժ երկիրս շինութեամբ ամրոցաց յիշ-

28 Անդ:

29 Անդ, էջ 83:

30 Եփրիկեան Հ. Ս. անդ, էջ 272:

խանաց պայազատաց Բաղրատունեաց, եւ բարեկանոն վանորէից, եւ կոչէր ըստ կողմանցն Կայեն, Միափոր, եւ Աղստեւ... մերթ գաւառաց եւ մերթ աշխարհաց, եւ մնան ցարգ անթիւ նշխարք շինուածոցն, է որ կանդուն եւ է որ աւեր. այսպիսի է եւ բերդն Կայենոյ, յարեւմտակողմն, ուր Աշոտ Երկաթ ամրացաւ երբեմն, եւ զօրք Չարմաղանայ յԺԳ դարու աւերեցին...»³¹:

Ինչպէս կը տեսնուի մէջբերումէն, Հ. Ալիշան Ձորափոր գաւառը արդի անուանով՝ Խաղախ կը կոչէ, որ կ'իյնայ երեք գետերու միջեւ, Պորչալուի, Կէօքչայի եւ Աղստեւի, եւ որոնց շրջանակին մէջ կը գտնուէր նաեւ Կայենան բերդը, եւ թէ Ձորափոր գաւառը, հին ատեն, Աղստեւոյ գաւառ ալ կոչուած է, եւ Ձորագետը «մեծ գետը» կոչուած էր նաեւ Աղստեւոյ գետ. ուստի, շատ հաւանական է որ երկու անուններու շփոթութենէն առաջ եկած է այս Կայենան բերդի փոխադրութիւնը, ինչ որ կը հաստատէ արդի Հայաստանի հնագէտ եւ աշխարհագէտ Թ. Գ. Զուհարեան, որ կը գրէ. «Կայենան բերդը գտնուած է Ալլաւերտի շրջանի Հաղբատ գիւղի մօտ, իսկ հնում գտնուած էր Գուգարաց նահանգին Ձորափոր գաւառին մէջ: Այս գաւառին մէջ էր մտնում նաեւ Կայենան ձորը, որից ծագել է Կայենան բերդի անունը...»³²: Ինչպէս որոշ կը տեսնուի որ Զուհարեան եւս ականատես կ'ընդունի որ Կայենան բերդը Հաղբատի մօտն էր եւ Հաղբատ կը գտնուէր Ձորափոր գետի վրայ, եւ որ հին ատեն, շատ հաւանաբար,

կը կոչուէր նաեւ Աղստեւոյ գետ. ահա թէ ինչո՞ւ երկրորդ կարծիքը ընդունողները այսօրուան Աղստեւ գետի ափին կը գտնուեն Կայենան բերդը:

Լէօ եւս Կայենան բերդը կը դնէ Ձորափոր գետին վրայ. կը գրէ «Այս բաւական է լինում որ Աշոտ գրգի իր տուած խոստումը, կալանաւորի Վասակ իշխանին եւ շղթայակալ բանտարկի նրան, Ձորափոր գաւառի Կայենան բերդում, Դիլիջանի կիրճում»³³:

Ներկայացնելով, հոս երկար քննելէ վերջ, Կայենան բերդի շինողի, շինութեան թուականի եւ դիրքի մասին, կրնանք ըսել, թէ Կայենան՝ Բաղրատունեաց նշանաւոր բերդը, Ժ. դարուն արդէն գոյուած թիւն ունէր, եւ շատ հաւանական է որ շինուած ըլլայ Աշոտ Երկաթէն, որ երկար տարիներ կռիւներ մղած է այդ կողմերը, իր երկրին վրայ արշաւող հիւսիսային բարբարոս ազգերուն դէմ. կը գտնուէր Ձորափորի հովտին մէջ, որ դէպի Շիրակ տանող միակ ճամբան էր, եւ ատոր ի պաշտպանութիւն է որ շինած է Կայենան բերդը, 915ի ժամանակները: Կայենան բերդը կը գտնուէր Սանահնի եւ Հաղբատի վանքերուն միջեւ, եռանկիւնաձեւ քարաժայռի մը կատարին վրայ, շրջապատուած ամուր պարիսպներով, եւ աւերացուած բարձր աշտարակներով. անոր աւերակները մինչեւ այսօր իսկ տակաւին կը տեսնուին:

Հ. ՄԻՔԱՅԷԼ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

31 Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, տպ. Վենետիկ, 1855, էջ 62, 83:

32 Զուհարեան Թ. Գ. Սովետական Հայաստանի պատմական յուշարձանները, տպ. Երեւան, 1961, էջ 118:

33 Լէօ, Պատմութիւն Հայոց, հա. Բ. տպ. Երեւան, 1947, էջ 577: